Աշխատանքային այցեր Շիրակի մարզի խոշորացվող համայնքներ

Ս.թ. օգոստոսի 23-24-ին Շիրակի մարզի Սարապատ (15 բնակավայր/համայնք), Աշոցք (11 բնակավայր/համայնք), Ամասիա (10 բնակավայր, 9 համայնք) և Արփի (15 բնակավայր, 9 համայնք) խոշորացված համայնքներում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության համատեղ՝ «Վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում 15 փնջերին աջակցություն հաղորդակցության միջոցառումներին և տնտեսական զարգացման ծրագրային գաղափարների մշակում» Ծրագրով անցկացվեցին աշխատաժողովներ: Ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ֆինանսական և մեթոդաբանական աջակցությամբ՝ «RDF» խորհրդատվական ընկերության մասնագետների կողմից:

Միջոցառումներին հրավիրված էին փնջերի վարչական աշխատողներ, մասնավոր և հասարակական հատվածի, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, համայնքային ծառայողներ: Երկու աշխատաժողովներին մասնակցել է նաև Շիրակի մարզպետարանի ՏԻՄ ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետներ Ս. Խաչատրյանը (Սարապատ և Աշոցք) և Վ. Սերոբյանը (Ամասիա և Արփի):

Միջոցառումների մասնակիցներին բացման խոսքով դիմեցին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից ՏԻՄ վարչության պետ պարոն Ա. Գիլոյանը և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից ծրագրի համակարգող պարոն Ա. Քեշիշյանը: Պարոն Ա. Գիլոյանը ներկայացրել է վարչատարածքային բարեփոխումների ընթացիկ վիճակը, նորություններ հաղորդել մասնակիցներին դրանց ընթացքի և ծրագրերի մասին, ներկայացրել նախարարության մոտեցումները անելիքների շուրջ: Պարոն Գիլոյանը նշել է նաև Ծրագրի շրջանակներում համայնքին փոխանցվող գիտելիքի ու հմտությունների կարևորությունը իբրև համայնքի՝ պոտենցիալ դոնորների հետ փոխգործակցությունն առավել համակարգված, մեթոդապես հիմնավորված և ամբողջ համայնքի կարիքների լուծմանն ուղղված գործունեությունը կարգավորելու արդյունավետ միջոց:

ԳՄՀԸ համակարգող պարոն Ա. Քեշիշյանը ներկայացրել է Ծրագրի նպատակներն ու խնդիրները, խնդրո առարկա Ծրագրում ԳՄՀԸ, ՏԿԶ նախարարության և ՀՏԶՀ-ի

համագործակցության մարմնավորման առանձնահատկությունները, հորդորել մասնակիցներին ակտիվ ներգրավվել աշխատանքներում և ապահովել իրապես մասնակցային, փոխհամաձայնեցված առաջնահերթությունների, կարիքների և ծրագրային գաղափարների վերհանում և ներկայացրել փորձագետների թիմը, ինչպես նաև կարևորել այս վերապատրաստման աշխատաժողովի կարևորությունը հնգամյա և այլ պլանավորման գործընթացների համար:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից աշխատաժողովը անցկացնում էին «RDF» խորհրդատվական ընկերության ներկայացուցիչներ, պարոնայք Վ. Կարապետյանը, Ա. Դաղոյանը, Ա. Գրիգորյանը և Գ. Մուրադյանը: Փորձագետները սեմինար-խորհրդակցությունը վարեցին «Մրցակցային առավելությունների մասնակցային ախտորոշում» (PACA), «ՀԵՔՍԱԳՈՆ» և «ԿՈՄՊԱՍ» Մասնակցային ախտորոշման և գնահատման գործիք միջազգային ճանաչում ունեցող մեթոդաբանությունների հիման վրա:

Աշխատանքները կազմակերպվել են պլենար և աշխատանքային խմբերի, ինչպես նաև համայնքապետերի և յուրաքանչյուր համայնքներից երկու- երեքական ներկայացուցիչների հետ առանձին քննարկումների միջոցով: Աշխատանքային խմբերի մասնակիցները պատասխանել են երեք հարցերի՝ «Որո՞նք են մեր համայնքի խնդիրները», «Ի՞նչ ռեսուրսներ ունենք դրանց լուծումներ տալու համար» (ուժեղ կողմերը) և «Ի՞նչ ծրագրեր են հարկավոր՝ վեր հանված խնդիրները լուծելու համար»: Կիրառվող մեթոդաբանությունների առանձնահատկություններից մեկն իրացվում է բացառապես մասնակիցների կողմից իրենց իսկ համայնքի խնդիրները վեր հանելու, դրանց լուծումները փնտրելու և դրանց ու առաջնահերթ լուծում պահանջողների շուրջ համաձայնության գալու մոտեցմամբ: Միևնույն ժամանակ, փորձագետները խրախուսում են քննարկումը, օգնում մասնակիցներին մնալ մեթոդաբանության սահմաններում, դրսևորել թեմատիկ ուղղվածություն, արձանագրում համաձայնեցված դիրքորոշումները և ամփոփում քննարկվածը:

Պատասխանները խմբավորվել և գնահատվել են «բալային գնահատման աղյուսակի» միջոցով, և ծրագրային գաղափարներին տրվել են կշիռներ: Սարապատում բարձրացված խնդիրներից էին՝ ա) ոռոգման ցանցերի վերականգնում, բ) ճանապարհային ցանցի վերականգնում, գ) գյուղատնտեսական մեքենաների կայան, դ) խմելու ջուր և այլն: Այս գաղափարները հետագայում կլրամշակվեն, փորձագիտական նախնական

գնահատականներ կտրվեն, և ամփոփ հաշվետվությունները կտրամադրվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը:

Աշոցքում բարձրացված խնդիրներից էին՝ ա) որակյալ սերմացուների առկայություն, բ) ոռոգման ցանցի նորոգում, գ) գյուղտեխնիկայի պարկ, դ) դաշտամիջյան և միջհամայնքային ճանապարհներ, ե) արոտների ջրարբիացում, զ) սպանդանոցների հիմնում, է) կաթի սառնարանային տնտեսություն: Բարձրաձայնված սոցիալական ծրագրերից էին երիտասարդ ընտանիքներին բնակարաններների տրամադրումը, Երևան-Աշոցք տրանսպորտային կապը և այլն:

Ամասիայի մասնակիցներն իրենց ծրագրային գաղափարները կառուցել են հետևյալ հիմնախնդիրների շուրջ. ա) մսի իրացման աջակցություն (սպանդանոց), բ) ցորենի մթերման գործում պետական աջակցություն (գների կայունության ապահովում), գ) նոր տեխնիկա (կոմբայն), դ) ճանապարհների սպասարկման տեխնիկա, ե) հակակարկտային կայաններ, զ) ոռոգման ներքին ցանցեր, է) պահեստային շինություններ, ը) մսի իրացման աջակցություն, թ) որակյալ սերմացուի ապահովում, ժ) արոտների ջրարբիացում և մեզվաբուծության կենտրոն, ի) երկարաժամկետ ցածր տոկոսով վարկավորման մեխանիզմների առկայություն: Կարևորվել են նաև նոր տեխնոլոգիաների վերաբերյալ ժամանակին իրազեկումը և մասնագիտական տեխնիկական աջակցությունը, հատկապես գյուղատնտեսության բնագավառում: Սոցիալական ծրագրերից նշվեցին՝ մանկապարտեզի և դպրոցի առկայություն 2-3 բնակավայրի համար, գրադարան, գազաֆիկացում: Որոշ մասնակիցներ ներկայացրեցին նաև թեմայից դուրս և միավորված համայնքի կառավարմանն առնչվող առաջարկներ, մասնավորապես՝ ապահովել յուրաքանչյուր բնակավայրից մեկ ներկայացուցիչ միավորված համայնքի ավագանում:

Արփիում տեղի ունեցած ժողովին, ինչպես և այլ վայրերում, մասնակիցները ներկայացնում էին ՏԻՄ-եր, դպրոցներ, երիտասարդություն, ֆերմերներ, վարչական անձնակազմ և այլն: Քննարկման արդյունքում վերհանվեցին հետևյալ կարիքներն ու առաջնահերթությունները. ա) որակյալ սերմացու և պարարտանյութեր, բ) մսի, կաթի և բրդի վերամշակում, գ) գյուղտեխնիկա, դ) ճանապարհների բարեկարգման տեխնիկա, ե) ջերմոցներ, զ) անասնապահության ռեսուրս-կենտրոն, է) ոռոգման ցանց, ը) ծրագրեր մշակելու ունակություններ, թ) հակակարկտային կայաններ, ժ) պահեստային տարածքներ և ի) առևտրի կենտրոն և գազալցակայան: Սրանցից առաջնահերթություններ ճանաչվեցին

(առավելագույն ձայներ հավաքեցին) գյուղտեխնիկա և ճանապարհների բարեկարգման տեխնիկան:

Այս համատեղ աշխատանքի հիման վրա, ելնելով նշյալ մեթոդաբանություններից, գույքագրվում են ըստ բնակչության և ՏԻՄ-երի՝ փնջում զարգացման հեռանկարները, վեր են հանվում համայնքի կարիքներն ու առաջնահերթությունները, դրանք համադրվում են մարդկային, ֆինանսական, տեխնիկական նյութական առկա ռեսուրսների հետ: Կազմվում է նաև համատեղ քննարկված և համաձայնեցված ծրագրային գաղափարների ցանկը, որից մեկ-երկու ամենաբարձր կշիռներ ստացած գաղափարները կշարադրվեն ավելի մանրամասն, որոնք հիմք կհանդիսանան հետագայում ծրագրային առաջարկների ու հայտերի մշակման համար:



Միջոցառման արդյունքում կազմվում է փնջի ծրագրային գաղափարների ընդհանրացված պատկերը, որը կարող է ծառայել որպես ընտրություններից հետո ձևավորված համայնքի հնգամյա զարգացման ծրագրերի մշակման, պոտենցիալ

դոնորների (այդ թվում՝ պետություն, միջազգային կազմակերպություններ, սփյուռք, քույր-քաղաք պայմանավորվածություններ և այլն) հետ ծրագրային համագործակցության հիմք:

Վերջապես, Ծրագրի ավարտից հետո կազմվելու է հաշվետվություն, որտեղ զետեղված կլինեն բոլոր փնջերում կատարված աշխատանքները, տնտեսական զարգացման բնագավառում վերհանված կարիքներն ու առաջնահերթությունները, մեկ-երկու ծրագրային գաղափարների մանրամասնեցված տարբերակները, ինչպես նաև կազմակերպիչների և իրականացնողների կողմից նկատված այլ նկատառումները: Այս հաշվետվությունը ներառելու է բոլոր փնջերում աշխատանքները՝ ելնելով այն մոտեցումից, որ բոլոր համայնքների կողմից միմյանց ծրագրերի մասին տեղեկացված լինելը կարող է օգտակար լինել՝ հետագայում սեփական աշխատանքները կազմակերպելու, համեմատական գնահատականներ տալու և առանձին համայնքներում սոցիալ-տնտեսական պլանավորման միջոցառումներ իրականացնելու համար: